

նչ գիտեմ. բայց հաւատամ եթէ ընդ հեղեղօրէն գոչման բազմագումար խմբիցն՝ Կեցցէ *Սուրբ Թագաւոր*, աստուածաբանեաց եւ ինքն *զԽաղաղութիւնն ամենեցուն*՝ յանմատուցից վերնոց խորանացն, հովանի կալով աշխարհաժողով հանդիսին: Ո՞ գիտէ թէ եւ պատկեր նորա դեղանկար յորմն եկեղեցւոյն՝ ոչ ձգէր առ ինքն զաչս բազմաց, յորժամ յառաջ խաղայր կարգ օրհնութեանն՝ յիւրմէ իսկ յուսով յերիւրելոյ: Ոչ ել ՚ի դերեւ յոյս քո, Սո՛ւրբդ Աստուծոյ, ՚ի սահմանեալ կէտ պսակման քոյդ համշիրակի. եւ տառք քոյոյ ձեռին քաղցրալուր եւս բարբառեցան ՚ի տաճարի անդ Ս. Սովիայ, իբրեւ ՚ի բնաշխարհէ երգոց հնչեցեալ ձայն աստուածագոյեցիկ. գոր քաղցրասցի եւ մեզ անագանելոցս դարուք եւ բազում իրօք՝ յեղեղել աստանօր՝ ըստ այլոց յիշատակաց անցելոց<sup>83</sup>:

*«Կարգաւորութիւն Օրհնութեան Թագաւորի, ըստ մեծի եկեղեցւոյն  
Հռովմայ:*

Յորժամ ժառանգաւորքն եւ ժողովն ընտրեն զոք բարձրացուցանել թագաւոր, զան յարքունի ապարանսն, արքեպիսկոպոսն եւ եպիսկոպոսունքն եւ ժառանգաւորքն, զգեստեալ եւ խաչիւք, ՚ի խնդիր ընտրելոյն. եւ կաթողիկոսն կենայ յեկեղեցին: Եւ ընտրեալն ունենայ հալաւ ձիաւորի. փիլոն, ջաղջեր եւ մահմէզ<sup>84</sup>: Եւ աստիճանաւորքն, (որք են) Գունդստապլն<sup>85</sup> թագաւորական նշանաւն, եւ Թագադիրն թագաւն, եւ Սենեսջալն ծաղկիւն՝ որ է *Տլաւտրիս*<sup>86</sup>, եւ Ջամբուլայն՝ թագաւորական զգեստիւն, եւ Պօղլերն՝ հանապովն, եւ Մարաջախտն՝ Գունդստապլին նշանաւն. պատեն զընտրեալն ՚ի կանգուն՝ հագաճ. եւ այլ լիճ ճորտերն ընդ դրուցէ բոլոր ՚ի կանգուն. եւ պահնորդներն այնոց ընդ դրուցէ՝ չտան թոյլ այլ ումէք մտանել:

<sup>83</sup> Ի շարս գրոց Կարգաց եկեղեցւոյն Հռովմայ՝ թարգմանեալ էր Սրբոյն եւ զԿարգ օրհնութեան Ինքնակալի ՚ի Հռովմ, որ «Բարձրագոյն քան զամենայն թագաւորս», ասի ՚ի խորագրին. եւ ՚ի կարգի բանիցն՝ միջամուխ առնելով՝ աղուաբար իմն ասէ Թարգմանիչն. «Ընթերցիր թէ լինիս օձող Ինքնակալի՝ ՚ի մեծ քաղաքն Հռովմ. ապա թէ ոչ՝ վայելես միայն ՚ի գիտելս, որպէս եւ երբեմն Թարգմանողս»:- Իսկ կարգ Թագաւորօրհնէից՝ որ գտանի յօրինակս ինչ Ձեռնադրութեան գրոց տանն Սոյ, եւ որով ձեռնադրեցան եւ օձան Լեւոնեանք մեր, այս է.

<sup>84</sup> *Փիլոն* է վերարկուն կամ քղամիդն. *Ջաղջեր*՝ ստորին զգեստն, *չաջգր* ըստ Թուրքաց. *Մահմէզ*, մտրակ կօշկաց ձիաւորաց եւ ասպետաց:

<sup>85</sup> Զմիոյ միոյ ՚ի պաշտօնէից ճառեցոյք յետոյ ուրոյն:

<sup>86</sup> Այն է Fleur de lis, գաւազան արքունի շուշանագլուխ: